# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2013թվականի N 127-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ Ա.Սանթրոսյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունը Դիլիջանի համայնքի գույքացանկում ընդգրկելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
3. Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ.Ա.Սանթրոսյան
4. Դիլիջանի քաղաքապետարան դիմած քաղաքի սոցիալապես անապահով վիճակում գտնվող քաղաքացիներին դրամական օգնություն տրամադրելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2013թվականի N 128-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Կալինինի փողոցից մինչև Տ. Պետրոսյան փողոցի թիվ 31 տուն ընկած ճանապարհահատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի վերանորոգում» աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ աշխատանքներ:Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել նշված աշխատանքների գնում համաձայն համապատասխան կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Կալինինի փողոցից մինչև Տ. Պետրոսյան փողոցի թիվ 31 տուն ընկած ճանապարհահատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի վերանորոգման լրացուցիչ աշխատաքների» գնման նպատակով համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 2023043 դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2013թվականի N 129-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ

· Դիլիջանի քաղաքային համայնքի Մյասնիկյան փողոցի թիվ 76 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող 11-003-0274-0005 ծածկագրով հողում քաղ.Եպրաքսյա Աղաջանյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություն. մասնավորապես ավտոտնակ՝ 40.8 քմ մակերեսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի քաղաքապետարանի գույքացանկում հետևյալ արժեքով ընդգրկել.

· Դիլիջանի քաղաքային համայնքի Մյասնիկյան փողոցի թիվ 76 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող 11-003-0274-0005 ծածկագրով հողում կառուցված ինքնակամ շինություն. մասնավորապես ավտոտնակ՝ 40.8 քմ մակերեսով - 69360 դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հուլիսի 2013թվականի N 130-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը դրական արձագանքելով Դիլիջան քաղաքի որոշ թաղամասերի բնակիչների խնդրանքին, առաջարկություն է ներկայացրել քաղաքի տարբեր թաղամասերում տեղադրել զրուցատաղավարներ, խաղահրապարակներ, նստարաններ և աղբամաններ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի որոշ թաղամասերում զրուցատաղավարների, խաղահրապարակների, նստարանների և աղբամանների պատրաստում և տեղադրում» աշխատանքների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ, բյուջեի ֆոնդային մասից «Հանգիստ, մշակույթ և կրոն» /բաժին 08 , խումբ 06, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 9942012 դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԱՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

2. ԲԱԼԻՆՅԱՆ ՌԱԶՄԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԳՐԵՏԱ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

7. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

8. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2013թվականի N 131-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան և համայնքի ավագանուն են դիմել թվով 11 քաղաքացիներ հայտնելով, որ փաստացի գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և դիմումներում նշված խնդիրները ֆինանսական տեսանկյունից չեն կարող լուծել սեփական միջոցներով :

Համայնքի ղեկավարը քաղաքացիների դիմումները ներկայացրել է Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը ՝ դիմումներում նշված խնդիրների լուծմանը աջակցելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներքոնշյալ քաղաքացիներին ցույց տալ դրամական օգնություն, այդ նպատակի համար Դիլիջանի քաղաքային համայնքի 2013թ. բյուջեի «Սոցիալական պաշտպանություն» /բաժին 10 խումբ 7, դաս 1/ 4729 հոդվածից հատկացնելով 110000 դրամ, այդ թվում ՝

- Ք.Դիլիջան Գետափնյա 4 բն. 26 հասցեի բնակիչ Թամարա Թադևոսյան- 10000 դրամ
- ք.Դիլիջան Մոլդովական 14 բն.29 հասցեի բնակիչ Վարսենիկ Հախվերդյանին – 10000 դրամ
- ք.Դիլիջան Մոլդովական 13 բն.2 հասցեի բնակիչ Մարտիկ Շահնազարյան– 10000 դրամ
- ք.Դիլիջան Կամարինի 73 հասցեի բնակիչ Արմենակ Մինասյան– 10000 դրամ
- ք.Դիլիջան Շահումյան 12 բն. 12 հասցեի բնակիչ Արաքսյա Կիրակոսյան - 10000 դրամ
- ք.Դիլիջան Սայաթ-Նովա 8 ա հասցեի բնակիչ Քաղցրիկ Բարսեղյան - 10000 դրամ
- ք.Դիլիջան Իվանովո 28 հասցեի բնակիչ Վերա Նիկիֆորովա - 10000 դրամ
- ք.Դիլիջան Վ.Անանյանի 32 հասցեի բնակիչ Զարինե Հովհաննիսյան - 10000 դրամ
- ք.Դիլիջան Օրջոնիկիձե 77 բն.16 հասցեի բնակիչ Վարդանուշ Ամիրյան– 10000 դրամ
- ք.Դիլիջան Հակոբջանյան 67 հասցեի բնակիչ Նաիրա Գրիգորյան– 10000 դրամ
- ք.Դիլիջան Կալինինի 222 հասցեի բնակիչ Հրածին Մնացականյան– 10000 դրամ